---	--	--	---	--	--

		<p>ժառանգության օրվան, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Գրադարանավարի օրվան, Երևանի հիմնադրման 2804-ամյակին, արվեստի տարբեր բնագավառների զարգացման և հանրահոշակման նվիրված միջոցառումներ, փոխադարձ միջոցառումներ քույր և գործընկեր քաղաքներում, Երևանի օրերը քույր և գործընկեր քաղաքներում մշակութային միջոցառումների իրականացում, Երևանում Արցախի օրերի կազմակերպում, «Ուտեստ ֆեստ» գաստրոփառատուն, էթնո երաժշտության շարք, Երևանի ենթակայության մշակութային կազմակերպությունների բրենդավորում և հանրահոշակում, երեխաների և պատանիների գեղարվեստական զարգացման, երիտասարդության և տարբեր տարիքային խմբերի մշակութային ժամանցի կազմակերպման ծրագրեր, մասնավորապես՝ Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատուն, Երևանի</p>	<p>միակողմանի ծնողազուրկ երեխաներ ունեցող ընտանիքները, բազմազավակ ընտանիքների մայրերը, արցախցի կանայք:</p> <p>1.ԵՔ-ՄԱԱԸՁԲ-22/1, Հրավիրատոմսերի՝ 3200 հատ, Ծրարների՝ 3200 հատ ձեռքմերում</p> <p>2.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-1, Տիկնայք և Պարոնյաք ներկայացման ցուցադրություն,</p> <p>3.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-2, Ռ. Հախվերդյանի համերգային ծրագրի իրականացում,</p> <p>4.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-3, Հայաստանի պետական կամերային երգչախմբի տոնական համերգ,</p> <p>5.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-4, «... և նորից Գարուն» ներկայացման ցուցադրություն,</p> <p>6.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-5, «Ատամնաբույժն...նորե՛ն» ներկայացման ցուցադրություն,</p> <p>7.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-6, Դարիո Ֆոյի «Ամեն գող՝ գող չէ» ներկայացման ցուցադրություն,</p> <p>8.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-7, Ռ. Մուշեղյանի «Գարուն ա» գեղարվեստական ֆիլմի ցուցադրություն,</p> <p>9.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-8, «Մալեֆիսենտան կամ քնած գեղեցկուհու լեգենդը» ներկայացման ցուցադրություն,</p> <p>10.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-9, «Մորգանի խնամին» մյուզիքլի ցուցադրություն,</p>	<p>03.03.2022-08.03.2022թ.</p> <p>4. «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ 03.03.2022-08.03.2022թ.</p> <p>5. «Սու Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ 03.03.2022-08.03.2022թ.</p> <p>6. «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ 03.03.2022-08.03.2022թ.</p> <p>7. «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ, 03.03.2022-08.03.2022թ.</p> <p>8. «Մոսկվա Կինոթատրոն» ՍՊԸ 03.03.2022-08.03.2022թ.</p> <p>9. «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ, 03.03.2022-</p>	
--	--	--	---	--	--

		<p>ենթակայության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում միասնական ավարտական քննությունների կազմակերպում, «Երևանի քաղաքապետի մրցանակ» շնորհալի պատանիների աջակցության ֆոնդ, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոն, մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբար</p>	<p>11.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-10, Հայաստանի պետական ջազ նվագախմբի համերգային ծրագրի իրականացում, 12.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-11, «Հարսնացու հյուսիսից» պիեսի ցուցադրություն, 13.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/17-12, «Սկապենի արարքները» ներկայացման ցուցադրություն, 14.ԵՔ-ՄԱԾՁԲ-21/52-14, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգային ծրագրի իրականացում:</p>	<p>08.03.2022թ. 10. Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ 03.03.2022- 08.03.2022թ. 11. «Հայաստանի պետական ջազ նվագախումբ» ՊՈԱԿ, 03.03.2022- 08.03.2022թ. 12. «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ 03.03.2022- 08.03.2022թ. 13. «Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ, 03.03.2022- 08.03.2022թ. 14. «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ 03.03.2022-</p>	
--	--	---	--	--	--

			<p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի ձեռք են բերվել «Թատրոնի միջազգային օրվան» նվիրված «Արտավազ» մրցանակաբաշխության մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ:</p> <p>1. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/28-1, Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ (ներկայացումների տեսանկարահանումներ):</p> <p>2. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/28-2, Մշակութային միջոցառման գեղարվեստական մասի ծառայություններ:</p> <p>3. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/28-3, Մշակութային միջոցառումների համար տեխնիկական մասի ապահովման և սպասարկման ծառայություն:</p> <p>4. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/28-4, Մշակութային միջոցառման դեկորացիաների և կոնստրուկցիաների տեղափոխության, վերանորոգման, մոնտաժման և քայմոնտաժման ծառայություններ</p> <p>5. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-22/2, Արտավազ մրցանակաբաշխության՝ թվով 25 հատ մրցանակի ձեռքբերում:</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր,</p>	<p>08.03.2022թ.</p> <ol style="list-style-type: none"> 1. «Թայմ» ՍՊԸ 21.03.2022- 22.03.2022թ 2. «Լայթ դիզայն» ՍՊԸ 21.03.2022- 27.03.2022թ. 3. «Թի Էն Սաունդ» ՍՊԸ 21.03.2022- 30.03.2022թ. 4. «Արարատ Փինաչյան» ԱԶ 21.03.2022- 27.03.2022թ. 5. «Ռուբին Լ. Տելս.» ՓԲԸ 23.03.2022- 26.03.2022թ. 	
--	--	--	---	---	--

			<p>համաձայն որի ԵՔ-ԷԱԾԾՁԲ-22/44-1 Իրականացվել է ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ ԵՔ-ՄԱԾՁԲ-22/39 ձեռք է բերվել «Ջազի միջազգային օրվան» նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ:</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ 1.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/56-1 ձեռք են բերվել Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ:</p> <p>Ա.Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճի վարձակալության ծառայության ձեռքբերում 2.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/56-2 Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ-ի դահլիճի /Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի / վարձակալության ծառայության ձեռքբերում 3.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/56-3</p>	<p>«Թի Էն Սաունդ» ՍՊԸ 29.03.2022թ.</p> <p>«Ջազի հայկական ասոցիացիա» ՀԿ 01.04.2022թ.</p> <p>1.«Արամ Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ 19.05.2022թ.</p> <p>2.Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ 16.05.2022թ.</p> <p>3.«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ 18.05.2022թ.</p> <p>4.«ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ 16.05.2022թ.</p>	
--	--	--	---	--	--

			<p>«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի դահլիճի վարձակալության ծառայության ձեռքբերում</p> <p>4.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/58</p> <p>Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում</p> <p>5.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/57</p> <p>Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների շրջանակում գովազդային ֆիլմերի արտադրության ծառայությունների ձեռքբերում</p> <p>6.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/59</p> <p>դիզայնի և ծառայություններ և այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների ձեռքբերում:</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-22/64</p> <p>ձեռք են բերվել «Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոն» մշակութային միջոցառումների շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ:</p> <p>«Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոն» միջոցառման շրջանակում</p>	<p>5.«Թայմ» ՍՊԸ 16.05.2022թ.</p> <p>6.«ԷյՋի Պրինտ Իքս» ՍՊԸ 16.05.2022թ.</p> <p>«ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ 02.06.2022թ.</p>	
--	--	--	---	---	--

			<p>մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝</p> <p>1. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/65 ձեռք են բերվել «Երեխաների իրավունքների պաշտպանության օր» մշակութային միջոցառումների շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ: «Երեխաների իրավունքների պաշտպանության օր» միջոցառման շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p> <p>2. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/66 «Երեխաների իրավունքների պաշտպանության օր» միջոցառման շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p> <p>3. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/69 Հեծանվի համաշխարհային օրվան նվիրված համերգային ծրագրի շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում</p> <p>4.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/92 «Սիմֆոնիկ Ռեինկարնացիա» խորագրով</p>	<p>1.«ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԿ 30.05.2022թ.</p> <p>2.«ԲԵԳՈ-ԲԵԼԼ» ՍՊԸ 31.05.2022թ.</p> <p>3.«Լայթ Դիզայն» ՍՊԸ 03.06.2022թ.</p> <p>4. «Արվեստ23» ՀԿ 02.09.2022թ.</p> <p>5. «Ստ. Զրբաշյանի</p>	
--	--	--	---	--	--

			<p>համերգային ծրագրի կազմակերպման ծառայությունների ձեռքբերում</p> <p>5.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/93 Մանկապատանեկան համերգային ծրագրի կազմակերպման ծառայության ձեռքբերում</p> <p>6. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/94 Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի «Կոկորդիլոսը» ներկայացման ցուցադրության կազմակերպման ծառայության ձեռքբերում</p> <p>7.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/95 Ս. Սարգսյանի անվան համազգային թատրոնի «և նորից գարուն» ներկայացման ցուցադրության կազմակերպման ծառայությունների ձեռքբերում</p> <p>8.ԵՔ-ՄԱԾՁԲ-22/96 “Art & Crafts souvenir” ցուցահանդեսի կազմակերպման ծառայությունների ձեռքբերում</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ ձեռք են բերվել Ամանորին և ՍուրբԾննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ:</p> <p>1. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/198 Ամանորին և Սուրբ Ծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման</p>	<p>անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ 03.09.2022թ.</p> <p>6. «Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ 25.09.2022թ.</p> <p>7. «Ս. Սարգսյանի անվան պետական համազգային թատրոն» ՊՈԱԿ 03.09.2022թ.</p> <p>8. «Շշուկ» ՍՊԸ 02-03.09.2022թ.</p> <p>1. «ԱՐՁԱԳԱՆՔ-ՊՐՈ» ՍՊԸ 23.11.2022թ.</p> <p>2. «Ֆակտորի</p>	
--	--	--	--	--	--

		<p>ծառայություններ</p> <p>2. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/223 Ամանորի և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների շրջանակում, Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված շատրվանների պուրակի տարածքում 2022 թվականի դեկտեմբերի 5-ից 2023թ. հունվարի 6 ներառյալ մշակութային միջոցառումների անցկացման վայրի թեմատիկ-գեղարվեստական ձևավորման ծառայություններ:</p> <p>3. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/227 Հանրապետության հրապարակում ամանորի միջոցառման շջանակներում հրավառության ապահովման ծառայություններ</p> <p>4. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/228 Ամանորի և Սուրբծննդյան տոնակատարության ծրագրի շրջանակներում Հանրապետության հրապարակում ամանորյա մշակութային միջոցառման տեխնիկական ապահովման ծառայություններ</p> <p>5. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/229 Ամանորի և Սուրբծննդյան տոնակատարության ծրագրի շրջանակներում Հանրապետության հրապարակում Ամանորյա համերգային ծրագրի իրականացման ծառայություններ</p> <p>«Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝</p>	<p>Փրոդաքշն» ՍՊԸ 12.12.2022թ.</p> <p>3. «Հոլիդեյ Դիզայն» ՍՊԸ 14.12.2022թ.</p> <p>4. «Թի Էն Սաունդ» ՍՊԸ 15.12.2022թ.</p> <p>5. «ԼՈՌԵ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 15.12.2022թ.</p> <p>1.«Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ, 27.12.2022-29.12.2022թ.</p>	
--	--	---	--	--

			<p>կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ ձեռք են բերվել Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների շրջանակում մշակութային միջոցառումների /մանկական ամանորյա ներկայացումներ/ կազմակերպման ծառայություններ:</p> <p>1. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/239-1 1.1 «Ընկույզկոտրուկի գաղտնիքը» մանկական ամանորյա ներկայացման ցուցադրություն,</p> <p>2. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/239-2 2.1 «Բրեմենյան երաժիշտները» մանկական ամանորյա ներկայացման ցուցադրություն,</p> <p>3. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/239-3 3.1 «Արքայադուստր Գորտը» մանկական ամանորյա ներկայացման ցուցադրություն,</p> <p>4. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/239-4 4.1 «Մոխրոտը» մանկական ամանորյա ներկայացման ցուցադրություն,</p> <p>5. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/239-5 5.1 «Սանտայի հյուրերը» մանկական ամանորյա ներկայացման ցուցադրություն,</p>	<p>2.«Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ, 27-30.12.2022-04-05.01.2023թթ.</p> <p>3.«Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ, 30.12.2022թ.</p> <p>4.«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ 24-29.12.2022-04-05.01.2023թթ.</p> <p>5.«Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ 03-04.01.2023թթ.</p> <p>6.Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ 04-05.01.2023թ.</p>	
--	--	--	--	--	--

			<p>6. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/239-6 6.1 «Մանչուկի և Կառլսոնի ամանորյա արկածները» մանկական ամանորյա ներկայացման ցուցադրություն</p>		
2	<p>Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում արտադպրոցական դաստիարակություն</p>	<p>Մշակութային նախնական մասնագիտական կրթության իրականացում, արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում հետագա ուսման նախապատրաստում, մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցման իրականացում, բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի կազմակերպում, երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում, օժտված և տաղանդավոր</p>	<p>Երաժշտական և արվեստի դպրոցներում շարունակվել են երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացումը: Շարունակվել են երաժշտական և արվեստի դպրոցներում դպրոցահասակ երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացումը, որոնք եզրափակվել են ուսումնական տարվա ավարտի հաշվետու համերգներով: Դպրոցների աշակերտները մասնակցել են մի շարք մրցույթների և ցուցահանդեսների՝ շահելով մրցանակներ և դիպլոմներ: Ազգային նվագարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանման, տարածման և հանրահռչակման նպատակով երաժշտական և արվեստի դպրոցներում իրականացվում է ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիրը: Երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներում երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական դաստիարակության</p>	<p>Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներ</p> <p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	

		<p>երեխաների և պատանիների բացահայտում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում</p>	<p>ծրագրերի, երաժշտարվեստի և այլ արվեստների ուսուցման իրականացումը ամառային արձակուրդներից հետո մեկնարկել է սեպտեմբերի 1-ից:</p> <p>«Ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոց» ՀՈԱԿ-ի մեծ երգչախումբը հուլիսի 19-ին մասնակցեց Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Ա.Տերտերյանի «Կրակի օղակ» օպերայի ներկայացմանը, հուլիսի 25-ին և սեպտեմբերի 14-ին՝ Բիզեի «Կարմեն» օպերայի ներկայացմանը, հուլիսի 28-ին՝ Ա. Խաչատրյանի համերգասրահում Վերդիի «Օթելլո» օպերայի ներկայացմանը, համերգային կատարում Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, Հոկտեմբերին՝ մեծ երգչախմբի մասնակցությունը Ալ.Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Ա.Տերտերյանի «Կրակի օղակ», Լեոնկովալոյի «Պայացներ» օպերաների ներկայացումներին, Իսնկո-Ապոր գրադարանում երգահան Արտեմի Այվազյանի 120-ամյակին նվիրված համերգին, նոյեմբերին՝ մեծ երգչախմբի մասնակցությունը Ալ.Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Ա.Տերտերյանի «Կրակի օղակ», Բիզեի «Կարմեն» օպերաների ներկայացումներին, Իսնկո-Ապոր գրադարանում Ալեքսեյ Հեքիմյանի 95-ամյակին նվիրված համերգին, դեկտեմբերին՝ մեծ երգչախմբի</p>		
--	--	---	--	--	--

			<p>մասնակցությունը Ալ.Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Պուչինիի «Տոսկա», Բիզեի «Կարմեն» օպերաների, Չայկովսկու «Մարդուկ-Ջարդուկ» բալետի ներկայացումներին, «Օպերա-Բալ» Ամանորի նորամուտի համերգին: 2022-2023 ուսումնական տարում Երևանի ենթակայության երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներ են ընդունվել 2642 սովորողներ:</p> <p>Ծրագրի շրջանակում ընդգրկված է 276 շահառու:</p> <p>Հոկտեմբերի 24-ին՝ «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոցի աշակերտները համերգներով հանդես են եկել Աշտարակ քաղաքի Ա.Այվազյանի անվան երաժշտական դպրոցում, հոկտեմբերի 24-ից 29-ը, ավանդույթի համաձայն, 1-ին դասարանցիները ճանաչողական այց են կատարել Սպենդիարյանի տուն-թանգարան, նոյեմբեր ամսին «Կամերտոն-Սոլիստ» երիտասարդ կատարողների միջազգային մրցույթին դպրոցից մասնակցել են 11 աշակերտ, որոնցից 9 աշակերտ արժանացել են մրցանակների, նոյեմբեր ամսին կայացած «Նոր Անուններ» մրցույթ-փառատոնին մասնակցել են 6 աշակերտ, դաշնամուրի դասարանի 3 սաներ մասնակցել են «Երաժշտություն հանուն ապագայի» մրցույթին, որից հետո դեկտեմբերի 22-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում հանդես են եկել Հայաստանի պետական</p>		
--	--	--	---	--	--

			<p>Ֆիլարմոնիկ նվագախմբի հետ, որպես մենակատարներ, դեկտեմբերի 16-18-ը ՌԴ Սանկտ-Պետերբուրգում կայացած «ՖՕՐՏԵ ՖՕՐՈՒՄ» միջազգային մրցույթին մասնակցել է դաշնամուրի դասարանի աշակերտուհի Սվետլանա Հակոբյանը և արժանացել 2-րդ մրցանակի, «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում Երևանում կայացած հավաքական համերգին, որը տեղի է ունեցել Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, մասնակցել են դպրոցի միջին տարիքի երգչախումբը և քանոնահարների համույթը: Հոկտեմբերի 5-20-ը անցկացվել են տեխնիկական ստուգարքներ բոլոր բաժիններում, իսկ դեկտեմբերի 12-20-ը՝ ակադեմիական ստուգարքներ, դեկտեմբերին՝ ավարտական դասարաններում սոլֆեջիո առարկայից ստուգողական թելադրություններ: Դեկտեմբերի 14-24-ը դպրոցի բոլոր բաժինները կազմակերպել են ամանորյա համերգներ: Դեկտեմբերի 23-ին և 26-ին կայացավ համերգ Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի լավագույն սաների, շրջանավարտների և համույթների մասնակցությամբ դպրոցի մեծ համերգասրահում:</p>		
2	<p>Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում և մշակույթի տներում արտադպրոցական դաստիարակություն</p>	<p>Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, սովորողների ազատ ժամանցի կազմակերպում, հետաքրքրությունների և</p>	<p>Արտադպրոցական դաստիարակության հաստատություններում՝ մշակույթի տներում, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններում իրականացվել են մշակույթի տարբեր բնագավառների գծով ուսուցման դասընթացներ: Կազմակերպվել են միջոցառումներ երեխաների</p>	<p>Երևանի ենթակայության մշակույթի տներ և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններ</p>	<p>2022թ. հունվար-</p>

		<p>նախասիրությունների զարգացման համար պայմանների ստեղծում, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, հայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:</p>	<p>և պատանիների հետաքրքրությունների և նախասիրությունների զարգացման, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորման նպատակով, ինչպես նաև մի շարք թեմատիկ միջոցառումներ:</p>	<p>դեկտեմբեր</p>	
3	<p>Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում</p>	<p>Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, երեխաների և մեծահասակների մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, հայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:</p>	<p>Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոնում իրականացվել է կրթադաստիարակչական բնույթի գործունեություն, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում, մասնավորապես՝ իրականացվել են մի շարք հանդիպումներ, միջոցառումներ այդ թվում՝ հանդիպում Դիլաքյան եղբայրների հետ, պարային միջոցառում «Իմ մայրիկ» խորագրով, համերգներ կայացում «Երազանքի աստղ», երգիծանկարի վարպետության դաս, «Նոր շունչ» ամենամյա պարային փառատոն, Պարի միջազգային օրվան նվիրված պարային փառատոն, «ԱԲԳ-ն և ընկերները» խորագրով ցուցահանդես, «Իմ երազանքի քաղաքը» խորագրով տարեվերջյան ավարտական ցուցահանդես, Բաց դաս «Կովկաս» պարային</p>	<p>Երևանի ենթակայության մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն</p> <p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	

			<p>անսամբլի խմբերում /16 մասնակից/, «Հայ աստղեր» պարային համույթի բոլոր սաները մասնակցել են համերգային ծրագրին, որը տեղի է ունեցել Պատանի հանդիսատեսի թատրոնում /110 մասնակից/, «Սանտա Լ» նորաձևության թատրոնի նախաձեռնությամբ Գավառում տեղի է ունեցել «Ամառային կոկտեյլ» նորաձևության ցուցադրությունը /50 մասնակից/: Դպրոցի սաները մասնակցել են Սուսերամարտի միջազգային առաջնությանը զբաղեցնելով 1-ի տեղը: Հոկտեմբերի 23-ին Կենտրոնի «Սանտա Լ» մոդելային դպրոցը ներկայացրեց Երևանի մանկապատանեկան կենտրոնի 100-ամյակին նվիրված «Մեծ Հայք» նորաձևության թատերականացված ցուցադրությունը, որտեղ մասնակիցները ներկայացան Հայ թագավորների, թագուհիների և Աստվածների կերպարներով, հոկտեմբերի 30-31-ը՝ «Նոր ժամանակներ՝ արդյունավետ կրթություն» երկօրյա կրթական կոնգրեսին մասնակցեցին կենտրոնի աշխատակիցները, նոյեմբերի 5-ին՝ Կենտրոնում կայացավ մեդիագրագիտության մասին հանդիպում-քննարկումը, որի արդյունքում երեխաներն ստացան իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները և մի շարք հմտություններ ձեռք բերեցին, նոյեմբերի 10-ին՝ Մանկապատանեկան “CareerLab” կարիերայի և շարժունության կենտրոնի հետ համատեղ նախաձեռնել են կենտրոնի ծնողական համայնքի ներկայացուցիչների հետ մասնագիտական կողմնորոշման թեմայով</p>		
--	--	--	---	--	--

			<p>հանդիպում-քննարկում, նոյեմբերի 21-ին՝ Նորագավիթի սուսերամարտի դպրոցում տեղի ունեցած՝ ՀՀ Սուսերամարտի պատանիների առաջնությանն իրենց մասնակցությունն են ունեցել ԵՔՄՍԿ սուսերամարտի խմբի սաները՝ զբաղեցնելով մրցանակային հորիզոնականներ, նոյեմբերի 22-ին՝ Երևանի «Նեպտուն» մարզադահլիճում տեղի ունեցած ՀՀ պարային բաց առաջնությանը մասնակցել է «Հայ աստղեր» պարային անսամբլը՝ «Էստրադային պար» անվանակարգում զբաղեցնելով 1-ին տեղ, նոյեմբերի 27-ին՝ Դիզայներ Jacob Meier-ի ցուցադրությանը մասնակցել է «Սանտա Լ» մոդելային դպրոցը, նոյեմբերի 29-ին՝ Գ, Սունդուկյանի անվան թատրոնում տեղի ունեցած «Պարատուն» ամենամյա պարային փառատոնին մասնակցել է «Հայ աստղեր» պարային անսամբլը, դեկտեմբերի 4-ին՝ Կենտրոնում տեղի է ունեցել է «Արվեստի անկյուն» նկարչական ստուդիայի հաշվետու ցուցահանդեսը՝ նվիրված ստուդիայի 1-ամյակին և Մանկապատանեկան կենտրոնի 100 ամյակին, դեկտեմբերի 22-ին՝ «Երևան» պարային ստուդիայում տեղի ունեցավ 2021-2022 ուս. տարվա սկսնակ երեխաների բաց դասը, դեկտեմբերի 23-ին՝ «Քոքոլաբ» պարային լաբորատորիան ներկայացրեց «Երազամանուկ» ներկայացումը, իսկ «Հայ աստղեր» պարային ստուդիայում տեղի ունեցավ 2021-2022 ուս. տարվա սկսնակ երեխաների բաց դասը, դեկտեմբերի 25-ին՝ Մանկապատանեկանի 100-րդ հրբեյանի տոնական միջոցառումների</p>		
--	--	--	--	--	--

			<p>շարքում համերգային ծրագիր «Սկսում ենք երազել», որին մասնակցել են կենտրոնում գործող սպորտային խմբերը և 2021-2022 ուս տարվա սկսնակների խմբերը և Մանկապատանեկանի 100-րդ հոբելյանի տոնական միջոցառումների շարքում համերգային ծրագիր «Այստեղ են իրականանում մեր երազանքները», որին մասնակցել են կենտրոնում գործող հիմնական խմբերը, դեկտեմբերի 26-ին՝ Կենտրոնի «Սեմ» թատերական ստուդիան ներկայացնում է «Թմկաբերդի առումը» ներկայացումը և Մանկապատանեկանի 100-րդ հոբելյանի տոնական միջոցառումների շարքում համերգային ծրագիր «Այստեղ ես տանն եմ», որին մասնակցել են կենտրոնում գործող հիմնական խմբերը:</p>		
4	Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների համար գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում	Նախատեսվում է ձեռք բերել և Երևանի ենթակայության արվեստի և երաժշտական դպրոցներին տրամադրել շուրջ 20 անուն երաժշտական գործիքներ՝ ավելի քան 100 հատ:	<p>Երաժշտական և արվեստի դպրոցների գործունեության արդյունավետության բարձրացում, անհրաժեշտ գույքով՝ երաժշտական գործիքներով և համապատասխան պարագաներով ապահովում</p> <p>«Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ ձեռք է բերվել 17 անուն 153 երաժշտական գործիք, նվիրաբերության կարգով հանձնվել է Երևանի ենթակայության 24 երաժշտական և արվեստի դպրոցներին:</p> <p>1. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/21-1 «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի հետ կնքվել է 9 անուն</p>	2022թ. առաջին-երրորդ եռամսյակ	1.«Տեսակենտրոն» ՍՊԸ

			<p>76 երաժշտական գործիքի մատակարարման պայմանագիր</p> <p>2. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/21-4</p> <p>«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ի հետ կնքվել է 7 անուն 63 երաժշտական գործիքի մատակարարման պայմանագիր</p> <p>3. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/21-3</p> <p>«Կարիզա» ՍՊԸ-ի հետ կնքվել է 1 անուն 14 երաժշտական գործիքի մատակարարման պայմանագիր</p>	<p>29.06.2022թ.</p> <p>2.«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ</p> <p>28.06.2022թ.</p> <p>3.«Կարիզա» ՍՊԸ</p> <p>27.06.2022թ.</p>	
5	Գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում և նվիրատվություն Արցախի Հանրապետության մշակութային կազմակերպություններին	Նախատեսվում է ձեռք բերել և Արցախի արվեստի և երաժշտական դպրոցներին տրամադրել շուրջ 10 անուն երաժշտական գործիքներ:	<p>ԱՀ Երաժշտական և արվեստի դպրոցների գործունեության արդյունավետության բարձրացում, անհրաժեշտ գույքով՝ երաժշտական գործիքներով և համապատասխան պարագաներով ապահովում:</p> <p>Երևանի քաղաքի ավագանու 08.02.2022թ.</p> <p>N523-Ա որոշմամբ 14 անուն 51 հատ գործիք, ընդհանուր 7611.0 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով, նվիրաբերվել է Արցախի Հանրապետությանը՝ ի դեմս Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արցախի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում օգտագործելու նպատակով:</p>	2022թ. հունվար-դեկտեմբեր	
6	Գրադարանային ծառայություններ	Բնակչությանը գրադարանային տեղեկատվության տրամադրում և սպասարկում, գիտության և մշակույթի լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական	«Ա. Իսահակյանի անվան ԿԳ» ՀՈԱԿ-ն (այսուհետ՝ ՀՈԱԿ) 2022թ. ունեցել է 258908 այցելու, սպասարկվել են շուրջ 36560 ընթերցողներ, գրքատացքը՝ 450799: ՀՈԱԿ-ը, որը դեռևս 2004թ. միացել է «Հայաստանի գրադարանների ավտոմատացման ցանց»	Երևանի ենթակայության գրադարաններ 2022թ. հունվար-դեկտեմբեր	

		<p>գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի օժանդակում, համաշխարհային և հայ գրականության, պատմության, մշակույթի և այլ արժեքների տարածում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում:</p>	<p>ծրագրին, 2022թ. շարունակել է մուտքագրումները ընդհանուր տեղեկատվական բազա և մուտքագրել 40896 անուն՝ 113377 միավոր գիրք: Մուտքագրումը շարունակվելու է՝ համաձայն միասնական աշխատանքային ժամանակացույցի և չափորոշիչների: ԿԳ-ում գործում են /ՀՀ-ում գրադարաններից առաջինում/ Ամերիկյան, Բրիտանական, Ասիական, Ֆրանկոֆոնիայի և Ռուսական կենտրոնները և այդ կենտրոններում 2022թ. կազմակերպվել են.</p> <ol style="list-style-type: none"> 1. Ամերիկյան կենտրոնում. դեռահասների ակումբի 49 ժամ պարապմունք, քննարկումների ակումբի՝ 36 ժամ, ընթերցանության ակումբի՝ 5 ժամ, «Հոգեկան առողջության և ինքնազարգացման ակումբի»՝ 22 ժամ, անգլերեն լեզվի A2 մակարդակի դասընթացի՝ 43 ժամ, «Բացահայտելով կինոն և Ամերիկան» կինոքննարկման 12 ժամ, բիզնես լեզվի՝ 18 ժամ, մեդիագրագիտության՝ 22 ժամ, խոսակցական ակումբի՝ 17 ժամ, ՎԵԲ ծրագրավորման՝ 22 ժամ, «Անվտանգ մոլորակ բնապահպանական ակումբի»՝ 13 ժամ դասընթացներ, 2. Ֆրանկոֆոնիայի կենտրոնում. լեզվի ուսուցման 44 ժամ դասընթաց, 3. Բրիտանական կենտրոնում. խոսակցական ակումբի 325 ժամ դասընթաց. 4. Ռուսական կենտրոնում. Ռուսաստանի պատմությանը վերաբերվող՝ 11 ժամանակ լեզվի ուսուցման՝ 83 ժամ դասընթաց: 		
--	--	---	--	--	--

			<p>Մշտապես նորացվում են համաշխարհային տեղեկատվական դաշտում կազմակերպության երկու անհատական WEB էջերը. հասցե՝</p> <ol style="list-style-type: none"> 1. www.isahakyanlibrary.am 2. www.yerevan.americancorners.am, որտեղ տեղեկատվություն է տրված ՀՈԱԿ-ի և Ամերիկյան կենտրոն բաժնի պատմական տարեգրության և կառուցվածքի, ծառայությունների մասին, նաև մշտապես թարմացվում է «Նորություններ» դաշտը՝ 3 լեզվով /հայերեն, անգլերեն, ռուսերեն/: <p>Facebook-ում «Իսահակյան գրադարան» էջը մշտապես թարմացվում է ԿԳ-ի աշխատանքային խմբի կողմից: Facebook-ում առանձին էջեր են վարում նաև ԿԳ-ի «Ամերիկյան, Բրիտանական, Ֆրանկոֆոնիայի, Ռուսական», մեթոդական, մատենագիտական, արվեստի և տեխնիկական գրականության բաժինները, ՀՈԱԿ-ի թիվ 15, 21, 27, 28, 29, 33, 36 գրադարան-մասնաճյուղերը:</p> <p>Համալրվել է «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանը մամուլի էջերում» մատենագիտական ցանկը : «Facebook»-ի մեր էջում կազմակերպվել և մշտապես ընթանում է խաղ-վիկտորինա՝ նվիրված գրականության, արվեստի և գիտության այլ ոլորտների: Ամփոփումից հետո այդ հեղինակներին և թեմաներին նվիրված</p>		
--	--	--	--	--	--

			<p>կազմակերպվել են գրական ընթերցումներ և ցուցահանդեսներ: Իսկ վիկտորինայի հաղթողներին հանձնվել են նվերներ՝ գրքեր: Համալրվել են երկրագիտական, թեմատիկ, կարգային, անհատական քարտարանները և «Բավարարված տեղեկանքների արխիվը»:</p> <p>Կազմվել և ստորաբաժանումներ են առաքվել հիշարժան տարեթվերին նվիրված մեթոդական նյութեր, օրացույցներ, մատենագիտական և թեմատիկ ցանկեր:</p> <p>ՀՈԱԿ-ի ֆոնդը 2022թ. համալրվել է 9744 օրինակ նոր գրականությամբ, որից՝ անհատ քաղաքացիներից և կազմակերպություններից որպես նվիրատվություն՝ 4801, փոխանցում՝ 1428, ստացում՝ 3215 միավոր:</p> <p>Իրականացվում է ՀՈԱԿ-ի աշխատակազմի շարունակական ուսուցում «Koha» և «ELGRAD» ծրագրերով: «ELGRAD» և «Koha» ծրագրերով ֆոնդերի մուտքագրման աշխատանքները շարունակվում են նաև ՀՈԱԿ-ի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում:</p> <p>Գրքափոխանակության ֆոնդերի հաշվին կատարվել է ֆոնդերի հետադարձ համալրում՝ ՀՈԱԿ-ի գրապահոցային հավաքածուից և առանձին բաժիններից՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մասնագիտական գրականությամբ ֆոնդերի համալրմանը:</p> <p>Մշտապես ուսումնասիրվում, խմբագրվում և համեմատվում են բոլոր տիպի գրացուցակները: Շարունակվել են համահավաք գրացուցակների էլեկտրոնային տեղեկատվական բանկ մուտքագրման աշխատանքները՝ ՀՈԱԿ-ի բոլոր</p>		
--	--	--	---	--	--

			<p>կառուցվածքային ստորաբաժանումներում: ԿԳ-ում ստացվել է երկու տասնյակ անուն պարբերական մամուլ՝ բաժանորդագրությամբ և տարբեր կազմակերպություններից՝ նվիրատվությունների միջոցով: Համալրվել են ընթերցողական քարտարանները /խավի, ուսումնական, անհատական/, աշխատանքներ են տարվել մերժումների բացառման և ուշացրած գրականության հավաքման ուղղությամբ: Կազմակերպվել են մասսայական բնույթի միջոցառումներ՝ որպես նոր ընթերցողների ներգրավման և մշակութային, կրթադաստիարակչական քաղաքականության վարման կարևորագույն միջոց: Մշտապես տարվել է անհատական աշխատանք նոր ընթերցողների հետ /գրույցներ՝ գրադարանից, էլեկտրոնային և դասական գրացուցակներից օգտվելու կանոնների մասին, շրջայցեր՝ գրադարանի տարբեր բաժիններ, ընթերցանության ղեկավարում՝ անհատական, ընտանեկան, խմբային և այլն/: Ընթերցողներին անվճար տրամադրվել են գրադարանի թեմատիկ ուղեցույցները:</p>		
7	Համայնքային գրադարանների ֆոնդերի համալրում	Համայնքային գրադարանների գրքային ֆոնդերի համալրումն իրականացվում է նվիրատվությունների, ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրված գրականության միջոցով, ինչը տեղեկատվական-գրադարանային	Բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկման բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում, հայ և համաշխարհային դասական և ժամանակակից գրականության հանրահոշակում: Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ ձեռք է բերվել 5855 գիրք, որը	2022թ. հունվար-դեկտեմբեր	

		<p>ծառայությունների առկա պահանջարկի, ինչպես նաև գրադարանների զարգացման առումով գնահատվում է ոչ բավարար: Ծրագրի շրջանակում Երևանի ենթակայության 19 համայնքային գրադարանները կհամալրվեն նոր և պահանջարկ ունեցող գրականությամբ, նախատեսվում է նաև իրականացնել մաշված, արդիականությունը կորցրած գրականության դուրսգրման աշխատանքներ:</p>	<p>նախատեսվում է նվիրաբերության կարգով հանձնել համայնքապատկան 19 գրադարաններին:</p> <p>1.ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/204-1 «Արմավ» հրատարակչությունից ձեռք է բերվել 684 գիրք</p> <p>2.ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/210-1 «Բուկինիստ» ՍՊԸ-ից ձեռք է բերվել 1036 գիրք</p> <p>3.ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/202-1 ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/203-1 ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/316-1 ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/308-2 «Էդիտ պրինտ հրատարակչությունից ձեռք է բերվել 2982 գիրք</p> <p>4.ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/211-1 «Չանգակ գրատուն» ՍՊԸ-ից ձեռք է բերվել 843 գիրք</p> <p>5.ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/211-2 «Անտարես» ՍՊԸ-ից ձեռք է բերվել 310 գիրք</p> <p>6.ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/308-1 «Մայ Մարկետ» ՍՊԸ-ից ձեռք է բերվել 1198 գիրք</p>	<p>1.«Արմավ» հրատարակչություն ՍՊԸ 20.07.2022թ.</p> <p>2.«Բուկինիստ» ՍՊԸ 19.07.2022թ.</p> <p>3.«Էդիտ պրինտ» ՍՊԸ 21.07.2022թ. 20.07.2022թ. 14.09.2022թ. 19.09.2022թ.</p> <p>4.«Չանգակ գրատուն» ՍՊԸ 19.07.2022թ.</p> <p>5.«Անտարես» ՍՊԸ 19.07.2022թ.</p> <p>6.«Մայ Մարկետ» ՍՊԸ 19.09.2022թ.</p>	
8	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	<p>Երևանի պատմամշակութային ժառանգությունը, հայկական կենցաղն ու մշակույթը, անցյալի և ներկայի արվեստի ստեղծագործությունները, ակնավոր գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնող ցուցադրությունների կազմակերպում, բնագավառին</p>	<p>Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարաններում շարունակում է իրականացվել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանումը, կազմակերպվել են բազմաբովանդակ միջոցառումներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, հանդիպում- քննարկումներ:</p> <p>Երևանի պատմության թանգարանում կայացել է Օլգա Մենի հեղինակային տիկնիկների անհատական ցուցահանդեսը, իրանահայ</p>	<p>Երևանի ենթակայության թանգարաններ 2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	

		<p>առնչվող գիտական, կրթական գործունեության իրականացում, թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրություն, թանգարանային ֆոնդերի համալրում, թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրությունների իրականացում, նոր ցուցադրությունների կազմակերպում՝ ընդգրկելով պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված այլ միջոցառումներ և ցուցադրություններ:</p> <p>Նախատեսվում է իրականացնել «Երևան քաղաքի պատմության թանգարան» և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ների տեխնիկական վերազինման, մշտական ցուցադրությունների արդիականացման աշխատանքներ</p>	<p>Էլվիրա Ղազարյանի ձեռքի աշխատանքների «Թեյի ու գույնի խճանկար» խորագիրը կրող ցուցահանդեսը: Ամբողջ հավաքածուն հեղինակի քույրը՝ Դիանա Ղազարյանը նվիրել է թանգարանին, «Երևանյան գարուն» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են 20-րդ դարի առաջին կեսի հայ նշանավոր գեղանկարիչներ Մ.Սարյանի, Ա.Առաքելյանի, Խ.Եսայանի, Վ.Գայֆեճյանի, Տարագոսի, Պ.Սիմոնյանի, Վ.Ախիկյանի, Գուրոսի, Գ.Գյուրջյանի, Փ. Թերլեմեզյանի և Ստ. Թարյանի աշխատանքները, «Թատերական Երևան» ցուցահանդեսը: Թանգարանի հիմնական ցուցադրության Երևանի նորագույն պատմության բաժնում կազմվել է Երևանի ճարտարապետության բացատրագիրը: Քեմբրիջ-Երևան որպես քույր քաղաքների կոչման 35-ամյակի կապակցությամբ Քեմբրիջի քաղաքապետարանում կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ ցուցադրվել են թանգարանի Երևան-Քեմբրիջ քույր քաղաքներին վերաբերող փաստաթղթեր, լուսանկարներ: Սլաշ-շոուի միջոցով ցուցադրվել են նաև հին և նոր Երևանի լուսանկարներ թանգարանի հավաքածուից: Նախապատրաստական աշխատանքներ են կատարվել «Շանդուն նահանգի պայտապատկերների խորհուրդը» խորագիրը կրող կազմակերպվելիք ցուցահանդեսի համար: Նորացվել են Երևանի պատմության հնագույն շրջանի բացատրագրերը և պիտակները հայերեն, անգլերեն և ռուսերեն, աշխատանքներ</p>		
--	--	---	---	--	--

		<p>են կատարվել հիմնական ցուցադրությունում առկա պիտակների վերատպման նպատակով, կազմվել է Երևանի մարզական կյանքի բացատրագիրը, ռուսերեն են թարգմանվել Երևանի նորագույն շրջանի պատմության գիտական ցուցադրության պիտակները:</p> <p>Երևանի պատմության թանգարանում իրականացվել են գիտացուցադրական, գիտահետազոտական, ֆոնդի համալրման, գիտալուսավորական-մասսայական և այլ աշխատանքներ աշխատանքներ:</p> <p>2022թ. ընթացքում ֆոնդերը համալրվել են 566 առարկայով, որից 232-ը՝ հիմնական ֆոնդ, 264՝ գիտա-օժանդակ ֆոնդ:</p> <p>Կարեն Դեմիրճյանի թանգարանում իրականացվել է «Գարունը աշակերտների աչքերով» խորագրով ցուցահանդեսը, «Խորհրդային դպրոցը» խորագրով բաց-դաս ցուցահանդեսը, շարունակվել են աշխատանքները «1975-2000թթ. Հայաստանի պատմության տարեգրություն» գրքի երկրորդ հատորի ստեղծման ուղղությամբ, կազմակերպվել է «Խորհրդային դպրոց» փաստավավերագրական ֆիլմի դիտում: Օգոստոսի 16-ին թանգարանը հյուրընկալել էր Մարի Իզմիրյանի անվան մանկատան սաներին: Թանգարանը կրթական ծրագիր էր մշակել մանկատան հատուկ խնամքի կարիք ունեցող սաների համար, որը տևեց մոտ 3 ժամ: Ծրագրի ընթացքում կատարվեց շրջայց թանգարանում, երեխաները ծանոթացան Կարեն Դեմիրճյան պետական, քաղաքական և</p>		
--	--	---	--	--

		<p>ազգային գործչի կյանքին և գործունեությանը: Այնուհետև կազմակերպվեց խմբերով խաղ-մրցույթ՝ Կ.Դեմիրճյանի ղեկավարման օրոք կառուցված խոշոր կառույցների պատկերներով փազլերի հավաքում: Հավաքած փազլերը որպես հուշ հանձնվեցին սաներին: Կազմակերպվել էր նաև փոքրիկ համերգային ծրագիր, որին երաշտական համարներով ներկայացան Ալ. Մալունցյանի անվան երաժշտական դպրոցի շրջանավարտներ՝ Սվետլանա Բլաժկոն և Լիլիա Առաքելյանը, թանգարանի վաղեմի փոքրիկ բարեկամ Վիկտորյան և «Արար» երգչաձմբի մենակատար Մարիամ Բարմախսոյանը: Սեպտեմբերի 25-ին՝ «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի շրջանակում թանգարանի ցուցասրահում կազմակերպվել է երիտասարդ նկարչուհի Նաիրի Արշակյանի անհատական ցուցահանդեսը: Հոկտեմբերի 3-ին Ռիմա Դեմիրճյանի ծննդյան կապակցությամբ կազմակերպվեց հուշ-երեկո: Երեկոյին ներկա էին Ռիմա Դեմիրճյանի մտերիմները և հարազատները: Միջոցառումը ուղեկցվում էր Ռիմա Դեմիրճյանի տեսագրություններով և նրա մասին հուշերով: Հոկտեմբերի 27-ին կատարվեց այց Կոմիտասի անվան պանթոն: Այնուհետև Կարեն Դեմիրճյանի թանգարանի ցուցասրահում կազմակերպվեց հանդիպում մտերիմների հետ, որը ուղեկցվեց վավերագրական ֆիլմով: Դեկտեմբերի 21-ին Ռիմա Դեմիրճյանի մահվան առաջին տարելիցի առիթով կատարվեց կոլեկտիվ այց Քաղաքային</p>		
--	--	--	--	--

			<p>պանթեոն: Նույն օրը Կարեն Դեմիրճյանի թանգարանում կազմակերպվեց «Մեկ տարի առանց սիրելի Ռիմա Աղասինյանի...» խորագրով հուշ-երեկո: «Կարեն Դեմիրճյան» ֆեյսբուքյան էջում հրապարակվել և լայն արձագանք են ստացել Կարեն Դեմիրճյանի կյանքին և գործունեությանը վերաբերող տարաբնույթ նյութեր, լուսանկարներ և տեսանյութեր: Գիտահետազոտական աշխատանքների ոլորտում շարունակվել է Կ.Դեմիրճյանի «Ղարաբաղյան օրագրերի» ուսումնասիրությունը և հրատարակման նախապատրաստումը: Գիտաֆոնդային գործունեություն. Տեսաժապավենների ֆոնդի թվայնացում, Թանգարանի հիմնական ֆոնդի համալրում՝ 168 ցուցանմուշ, Վերականգնում՝ 12 ցուցանմուշ:</p> <p>Կատարվել են թանգարանի բակի վերանորոգման ընթացիկ աշխատանքներ: Ֆ. Նանսենի թանգարանում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ և դասախոսություններ՝ «Ֆրիտյոֆ Նանսենի կյանքը և հայանպաստ գործունեությունը», «Ֆրիտյոֆ Նանսեն գիտնական-ճանապարհորդը», «Ֆրիտյոֆ Նանսենի և Ջեքսոնի պատմական հանդիպումը», «Ֆրիտյոֆ Նանսեն հետազոտողը» «Ֆրիտյոֆ Նանսենը Երևանի պետական համալսարանի առաջին պատվավոր դոկտոր» թեմաներով: Դպրոցահասակների համար կազմակերպվել է բաց դաս՝ Ֆրիտյոֆ Նանսենի «Դահուկներով՝ Գրենլանդիայով» գրքի քննարկմամբ:</p>		
--	--	--	--	--	--

			<p>Հուլիսի 6-ին՝ ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված միջոցառում: Հուլիսի 15-ին՝ դպրոցահասակների համար կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված Ֆ.Նանսենի մանկության ու պատանեկության տարիներին, արշավներին: Օգոստոսի 10-ին՝ Արտագնա միջոցառում. Ֆ.Նանսենի թանգարանի աշխատակազմը հյուրընկալվեց Տավուշի մարզի Ազատամուտ համայնք: Տեղի ունեցավ հանդիպում համայնքի ճամբարի սաների հետ: Ճամբարականներին ներկայացվեց բևեռախույզ, մեծ մարդասեր, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր և հայասեր Ֆ.Նանսենի կյանքը, գիտական և հասարակական գործունեությունը, այցը Հայաստան: Ճամբարականներին հետաքրքրող հարցերին պատասխանեց թանգարանի գլխավոր ավանդապահ Անահիտ Վարդանյանը: Օգոստոսի 12-ին՝ Տեղի ունեցավ երիտասարդության միջազգային օրվա առթիվ միջոցառում: Ներկաները լսեցին զեկուցումներ՝ նվիրված Ֆ.Նանսենի՝ երիտասարդ տարիներին կատարած գիտահետազոտական աշխատանքներին և մարզական հաջողություններին: Կարևոր էր Նանսենի պատգամը երիտասարդներին: Սեպտեմբերի 1-ին՝ թանգարանի բակում կազմակերպվեց բացօթյա միջոցառում՝ նվիրված գիտելիքի օրվան: Սեպտեմբերի 23-ին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ «Պոլսահայ գրականությունը 20-րդ դարի կեսից մինչև մեր օրերը» համահայկական</p>		
--	--	--	---	--	--

			<p>գիտաժողով: Գիտաժողովին կարևոր մասնակցություն ունեցավ Ֆ.Նանսենի թանգարանը: Սեպտեմբերի 24-ին՝ Եվրոպական ժառանգության օրերին նվիրված Ֆ.Նանսենի թանգարանում տեղի ունեցավ լիտվացի գրողների հայերեն հրատարակված գրքերի ցուցահանդես: Յուցահանդեսին ներկա գտնվողների համար թանգարանի աշխատակիցները կարևոր դրվագներ ներկայացրին հայ-լիտվական գրական-մշակութային առնչությունների պատմությունից. տակավին անցյալ դարի 60-ականներից լույս են տեսել լիտվացի մեծանուն բանաստեղծ, Եղիշե Չարենցի մրցանակի դափնեկիր Էդուարդաս Մեժելայտիսի ստեղծագործությունները հայերեն՝ Պ.Սևակի և Վ.Դավթյանի թարգմանությամբ: Այնուհետև՝ վերջին տասնամյակին հայերեն են թարգմանվել և հրատարակվել լիտվացի հեղինակներից Էդուարդաս Մեժելայտիսի, Քրիստիյոնաս Դոնելայտիսի, Անթանաս Բարանաուկասի, Մայրոնիսի, Յոնաս Բիլյունասի ստեղծագործությունները (թարգմանիչ՝ Ֆ.Բախչինյան): Սեպտեմբերի 25-ին՝ Թեքեյան մշակութային միությունում Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանի աշխատակազմը մասնակցեց «Վահան Թեքեյան ամենամյա» ամենամյա միջազգային մրցանակաբաշխության 2021 թ. ամփոփիչ ձեռնարկը: Արդեն 28-րդ անգամ ՀԹՄՄ բարձր գնահատանքի է արժանացնում մշակութային և գիտության տարբեր բնագավառների լավագույններին: Այս տարի</p>		
--	--	--	---	--	--

			<p>մրցանակներ շնորհվեցին 7 անվանակարգերում՝ «Շաքե Ղազարյան» հիմնադրամի եւ «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Մրցույթի «Գրականություն» անվանակարգում հաղթող ճանաչվեց գրող, Ֆ.Նանսենի թանգարանի տնօրեն Ֆ.Բախչինյանի «Վերջին մանկություն» վեպը:</p> <p>Նոյեմբերի 9-ին դպրոցականների համար կազմակերպվել էր «Նանսենի այցը Գյումրի» խորագրով թեմատիկ բաց դաս, նոյեմբերի 14-ին Ֆ.Նանսենի՝ Խաղաղության Նոբելյան մրցանակի արժանանալու 100-ամյակի առթիվ նորվեգացիներ Լեյֆ Կագենին և Հեյդի Կվամմենին դիմավորեցին Նանսենի թանգարանի բակում և միջոցառումների շարք կազմակերպվեց իրենց համար, դեկտեմբերի 7-ին դպրոցականների համար կազմակերպվել էր «Նանսենի այցը Գյումրի» խորագրով թեմատիկ բաց դաս, դեկտեմբերի 17-ին թանգարանում տեղի ունեցավ միջոցառում՝ «Հայկական ճարտարապետությունն ըստ Նանսենի» խորագրով:</p> <p>Հրատարակության է հանձնվել Ֆրիտյոֆ Նանսենի՝ Հայաստանին նվիրված «Հայաստանը և Մերձավոր Արևելքը» գիրքը:</p> <p>Ժամանակակից արվեստի թանգարանում կայացել է Արամ Ազարյանի ֆոտոցուցադրությունը, Միհր Ժամանակակից պարի թատրոնի կողմից Ժամանակակից պարային</p>		
--	--	--	--	--	--

		<p>հարթակը, «Հետքեր»-ը, որը «Opere Vive (Կենդանի գործեր)» հանրային արվեստի ծրագրի մի մասն է, որի շրջանակում մի շարք իտալացի արվեստագետներ բացահայտում են Հայաստանը և հայ արվեստը, «Աշխարհը՝ աշխարհի մեջ»՝ Աուտիզմի իրազեկման միջազգային օրվան նվիրված ֆոտոցուցահանդեսը, Թանգարանների գիշեր միջոցառման շրջանակներում թանգարանում մեկնարկեցին թանգարանային առարկաների վերականգնման աշխատանքները, Հենրիկ Իգիթյանի 90 և թանգարանի հիմնադրման 50-ամյա հոբելյաններին նվիրված ցուցահանդեսը: ԺԱԹ-ում ԲՈՅԱԶՅԱՆ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ և Պրահայի ՎԱՐԲՈ ԱՐԹ ցուցասրահի կողմից կայացել է «Հրաշալի Տասնյակը» խորագրով 20-րդ դարի եվրոպական նկարիչների աշխատանքներով ցուցահանդեսը: Ցուցահանդեսին ներկայացված են Ժանսեսմի, Գառզուի, Բեռնար Բյուֆֆեյի, Սալվադոր Դալիի, Լուի Տոֆֆոլիի, Ժակ Պելլեգրինի, Կլոդ Վայսբուշի, Յոզեֆ Շիմայի, Ժան Միոտի և Սերժ Մենժիյսկու աշխատանքները: Նոյեմբերի 5-25-ը կայացել է Հասմիկ Ավետիսյանի «ՀՊՈՒՄ» ԱՐՏ նախագծի ցուցադրությունը, դեկտեմբերի 2-ից բացվել է «Վերածննդի 10 հանճարներ» խորագրով մուլտիմեդիա ցուցահանդեսը: «Էրեբունի» ՊՀԱԹ-ում իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ վերապատրաստման դասեր, ցուցահանդեսներ: «Էրեբունի» ՊՀԱԹ-ում այցելուների համար</p>		
--	--	--	--	--

			գործել են «Երկու իրի պատմություն», «Կինը և Նոր Արմավիրի հնագիտական գանձերը» «Հնագիտական մասունքներ Շուշիից»: Կայացել է «Սիրո ուժն է անհաղթ» խորագրով միջոցառումը: 2022թ. «Էրեբունի» ՊՀԱԹ-ն ունեցել է 43944 այցելու, Ֆ.Նանսենի թանգարանը՝ 2024, Կ.Դեմիրճյանի թանգարանը՝ 2094, ԺԱԹ-ը՝ 23194, Երևանի պատմության թանգարանը՝ 21527:		
9	Թատերական ներկայացումներ	Ազգային և համաշխարհային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, թատրոնների խաղացանկերի համալրում՝ յուրաքանչյուր թատերաշրջանի ընթացքում նոր և վերականգնված ներկայացումների ցուցադրությամբ, ստեղծագործական կազմերի համալրում, ներկայացումների որակի բարձրացում, մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոններին: Նախատեսվում է իրականացնել «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» և «Մ. Մկրտչյանի	Երևանի ենթակայության թատրոններում բեմադրվել են դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունները: Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում 2022թ. ցուցադրվել է 85 ներկայացում, Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում՝ 116, Մ.Մկրտչյանի արտիստական թատրոնում՝ 27:	Երևանի ենթակայության թատրոններ 2022թ. հունվար-դեկտեմբեր	

		անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ների հիմնանորոգման, բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինման աշխատանքներ,			
10	«Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» և Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ների շենքերի հիմնանորոգում	Ծրագրի իրականացմամբ կապահովվի «Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» և «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ների բնականոն գործունեությունը, կիրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ ՀՈԱԿ-ների շենքերում: Նշված աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը ձեռք են բերվել 2021 թվականի ընթացքում:	Իրականացվել է «Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» և Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ների շենքերի հիմնանորոգման միջոցով նոր և հարմարավետ պայմաններում թատերական ներկայացումների ցուցադրություն: Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր, համաձայն որի 1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/80 «Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն»-ի հիմնանորոգման աշխատանքներ: 2. ԵՔ-ՄԱԾՁԲ-22/22 Հեղինակային հսկողության ծառայություն: Երկու պայմանագրերի համաձայն՝ շարունակվում է «Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքները, որի արդյունքում թատրոնի գործունեությունը կկազմակերպվի նոր և հարմարավետ պայմաններում:	2022թ. հունվար-դեկտեմբեր	1.«Արտդիան շին» ՍՊԸ 24.02.2022թ.- 07.11.2022թ. 2.«Օն դիզայն» ՍՊԸ 09.03.2022թ.- շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց
11	Կենդանաբանական այգու ցուցադրություններ	Նախատեսվում է Երևանի կենդանաբանական այգում իրականացնել վայրի կենդանիների պահպանման,	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/39 «Երևանի Կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի	«Նայինա»ՍՊԸ 01.12.2022թ.- 20.12.2022թ.	

		<p>Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացման և ցուցադրության աշխատանքները: Այգում կիրականացվեն համապատասխան աշխատանքներ՝ կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և փոխանակման միջոցով նոր տեսականիով ապահովելու նպատակով: Այգին նաև զբոսանքի և ժամանցի յուրատեսակ վայր է, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին ծանոթանալու վայրի բնաշխարհին, իրականացնում է մշակութային-լուսավորչական գործառույթ՝ այցելուներին տալիս է ինչպես բնապահպանական դաստիարակություն, այնպես էլ ձևավորում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և մարդասիրական վերաբերմունք: 2022 թվականին նախատեսվում է իրականացնել այգու տարածքի շառավղային ցանկապատի, արևային վահանակների, հոսքաջրերի մաքրման փոքր կայանների, տեսահսկման համակարգի, ջրի ֆիլտրացիոն</p>	<p>կարիքների համար անվտանգության համակարգի մատակարարման պայմանագիր</p> <p>ԵՔԿԱ-ԳՄՇՁԲ-22/43 12.01.2023թ. «Երևանի Կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցման պայմանագիր: (էգ փղի և Ընձուխտների փառախնների և ձմեռային հովանոց-վանդակների ինչպես նաև Կապիկների ամառային և ձմեռային հովանոց-վանդակների նախագծում):</p> <p>2022 թ. մարտի 28-ից Երևանի կենդանաբանական այգում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Կենդանաբանական այգու գլխավոր մուտքի կամարի վերանորոգում 2. Հանրային տարածքի բազալտե քարերի մաքրում 3. Ազատավանդակների վերանորոգում- մոտ 13 ազատավանդակ է մասնակի նորոգվել 4. Անվտանգության համակարգի ներդրում- մոտ 130 հատ տեսախցիկ է տեղադրվել ամբողջ այգում 5. Տոմսային նոր համակարգի ներդրում 6. Կերախոհանոցի սառնարանային նոր համակարգի ներդրում 7. Կերախոհանոցի վերանորոգում 8. Վագրերի ազատավանդակի վերակառուցում (այժմ ընթանում են 	<p>«Իթակե 999» ՍՊԸ Ընթացքի մեջ է</p>	
--	--	--	---	---	--

		<p>համակարգերի տեղադրման, այգու կերախոհանոցի կառուցման և ԼԵԴ լամպերով էներգաարդյունավետ լուսավորության անցկացման, փղի/գետածիու ազատավանդակի ընդլայնման նախագծային աշխատանքները:</p>	<p>աշխատանքները)</p> <ol style="list-style-type: none"> 9. Կլինիկայի վերագինում- 46 հատ սարքավորում, գույք, գործիք 10. Կենդանիների մասին տեղեկատվական վահանակների տեղադրում 11. Կողմնորոշիչ ցուցանակների տեղադրում 12. Լուսավորվող 3D գովազդային վահանակների տեղադրում 13. Կոյուղու ցանցի նախագիծ, նախահաշիվ 14. Էլ. ցանցի ներքին նախագիծ, նախահաշիվ 15. Փղի, կապիկների, ընծուղտի ազատավանդակների կառուցման նախագիծ, նախահաշիվ 16. Կենդանիների համալրում- 24 տեսակ կենդանի՝ 62 գլխաքանակ: Այգին համալրվել է աֆրիկյան ջայլամներով, կայմանով, ամուրյան 2 վագրով, 2 գենետայով, պսակակիր կռունկներով, շիկա-մոխրագույն կենգուրուներով, լուսանով, թագավորական փասիանով, գորշուկով): 17. Այգու պահեստային մասի ասֆալտապատում 18. Պահեստի ցանկապատի կառուցում 19. Այգու տարածքի կանաչապատում 20. Հանրային տարածքի արտաքին լուսավորություն 21. Այգու ամբողջ տարածքի լուսարձակների ներկում- 161 հատ 22. Այգու մուտքի տախտակամածի հիմնովի նորոգում 23. Ապակե ազատավանդակների փոխում, 		
--	--	---	--	--	--

			<p>փայլեցում, մաքրում</p> <p>24. Այգու ակվատերարիումի վերազինում</p> <p>25. Այգու հանրային տարածքի խաղահրապարակի կառուցում</p> <p>26. Այգու հարակից ավտոկայանատեղիի լուսավորություն</p> <p>27. Այգու հանրային տարածքում և հարակից ավտոկայանատեղիում գծանշումների թարմացում</p> <p>28. Որոշ կենդանիների ձմեռանոցների մասնակի նորոգում՝ տանիքի, ծածկի փոխարինում</p> <p>29. Ընձառյուծի ջրավազանի նորոգում</p> <p>30. Ախտահանման, մաքրող սարքերի ձեռքբերում</p> <p>31. Լեմուրների կղզու մաքրում</p> <p>32. 2 էլեկտրական մեքենայի ձեռքբերում</p> <p>33. Այգու տարածքի նստարանների փոխարինում</p> <p>34. Այգու տարածքի աղբամանների փոխարինում</p> <p>35. Շինարարական և կանաչապատման հետ կապված բազմաթիվ սարքերի ձեռքբերում</p> <p>36. Վարչական շենքի արտաքին պատերի լվացում:</p> <p>37. Վարչական շենքի ներքի հարդարման աշխատանքներ:</p>		
12	Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում	Երաժշտական և պարային համերգային ծրագրերի կազմակերպում և իրականացում, օժտված երեխաների ստեղծագործական,	Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպման հաստատությունները՝ մանկական ֆիլիարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը, «Հայ-Արտ» մշակութային	«Երևան» փողային նվագախումբ ՀՈԱԿ, «Հայ-Արտ մշակութային կենտրոն» ՓԲԸ, «Հայաստանի Փոքրիկ	

		<p>կատարողական ձեռքբերումների, դեբյուտային ստեղծագործական աշխատանքների ներկայացում, միջոցառումների և մրցույթների, այդ թվում՝ համաքաղաքային, հանրապետական, միջազգային մրցույթների, փառատոների կազմակերպում և միջազգային մրցույթներին, փառատոներին մասնակցության ապահովում:</p>	<p>կենտրոնը շարունակելով իրենց գործունեությունը 2022թ. իրականացրել են մի շարք ցուցահանդեսներ, միջոցառումներ, բաց դասեր:</p> <p>«Երևան» փողային նվագախումբը իրականացնում է նախապատրաստական աշխատանքներ, փորձերին զուգահեռ կատարվել են ստեղծագործությունների մշակումներ և փոխադրումներ փողային նվագախմբի համար: Նպատակ ունենալով վերականգնել երբեմնի գեղեցիկ ավանդույթները, երբ փողային նվագախմբի երաժշտություն էր հնչում քաղաքի այգիներում և պուրակներում, «Երևան» փողային նվագախումբը կազմել է ամառ-աշուն համերգաշրջանի ժամանակացույց, ըստ որի, Երևան քաղաքի այգիներում ամսվա շաբաթ օրերին նվագախումբը ելույթ կունենա բազմաժանր համերգային ծրագրերով: Համերգաշրջանը պատշաճ կերպով իրականացնելու համար կատարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ գնվել են նոտակալներ /պուլտեր/, աթոռներ և պատվիրվել է լոգոտիպ ՀՈԱԿ-ի գործունեության կոնցեպտին համահունչ գրաֆիկական մշակմամբ: Համերգները իրականացվել են ըստ ժամանակացույցի. հուլիսի 27-ին՝ Մաշտոցի պողոտա Դիաննա Աբգարի պուրակ, հուլիսի 30-ին՝ քաղաքապետարանի հարևանությամբ մանկական այգի, սեպտեմբերի 3-ին՝ Հաղթանակի զբոսայգի՝ սեպտեմբերի 10-ին՝</p>	<p>երգիչներ» մանկական Ֆիլիարմոնիա» ՀՈԱԿ, «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիարմոնիա» ՀՈԱԿ</p> <p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	
--	--	---	--	--	--

